

ՌԵԳՈ ԸՆՏԱՆԻՔ

1. ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ՌԵԳՈ ԸՆՏԱՆԻՔ» պրոդուկտը դժբախտ պատահարներից ապահովագրություն է ամբողջ ընտանիքի համար: Ապահովադիր կարող է հանդիսանալ ցանկացած ֆիզիկական անձ:

Պրոդուկտը թույլ է տալիս տրամադրել դժբախտ պատահարներից ապահովագրական պաշտպանություն ամբողջ ընտանիքի համար՝ մեկ պայմանագրի շրջանակներում: Պրոդուկտի պայմանների համաձայն մեկ պայմանագրով կարող են ապահովագրվել ֆիզիկական անձ **ապահովադրի հարազատները**: Հարազատները, որոնք կարող են ապահովագրել մեկ պայմանագրի շրջանակներում, համարվում են՝ կինը/ամուսինը, երեխաները, ամուսինների ծնողները, քույրերը և եղբայրները, ովքեր Ապահովադրի հետ վարում են համատեղ սնտեսություն: Մեկ պայմանագրով ապահովագրության է ընդունվում ցանկացած թվով ապահովագրված անձինք - ապահովադրի 1-70 տարեկան հարազատները:

2. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊՍՏԱՀԱՐ

Դժբախտ պատահար է համարվում Պայմանագրով նախատեսված իրադարձությունը, որը տեղի է ունեցել պայմանագրի գործողության ընթացքում և ապահովագրության տարածքում, տեղի է ունեցել փաստացի արտաքին գործոններից, պայմանավորված չէ որևէ հանկարծակի կամ անկանխատեսելի հիվանդությամբ, Ապահովագրված անձի կամքից անկախ իրադարձություն է, որի հետևանքով Ապահովագրված անձը ստացել է հաշմանդամություն կամ մահացել է, այդ թվում՝



- բնության տարերային երևույթներ, պայթյուն, այրվածք, ցրտահարություն, ջրահեղձում, էլեկտրական հոսանքի ազդեցություն, շանթահարում, արևահարում, երրորդ անձանց կամ կենդանիների հարձակում, Ապահովագրված անձի կամ նրա վրա որևէ իրի վայր ընկնելը, անսպասելի խեղդամահություն, օտար մարմնի հանկարծակի ընկնելը շնչառական ուղիներ, հանկարծակի սուր թունավորում վնասակար մթերքներով կամ նյութերով (թունավոր բույսերով, քիմիական նյութերով, դեղորայքով, վատորակ սննդամթերքով), ինչպես նաև տրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով տեղի ունեցած դեպքեր, վթարներ, մեքենաների, մեխանիզմների, արտադրության միջոցների և այլ սարքերի օգտագործում:

- Դժբախտ պատահար է համարվում նաև մարմնի վերջույթների կամ ողնաշարի կտրուկ ֆիզիկական գերլարվածությունը, որի հետևանքով տեղի է ունենում հոդախախտ, մկանների, ջիլերի կամ անոթների մասնակի կամ ամբողջական պատռվածք հանկարծակի սուր թունավորում վնասակար մթերքներով կամ նյութերով (թունավոր բույսերով, քիմիական նյութերով, դեղորայքով, վատորակ սննդամթերքով), ինչպես նաև տրանսպորտային միջոցների շահագործման հետևանքով տեղի ունեցած դեպքեր, վթարներ մեքենաների, մեխանիզմների, արտադրության միջոցների և այլ սարքերի օգտագործում: Դժբախտ պատահար է համարվում նաև մարմնի վերջույթների կամ ողնաշարի կտրուկ ֆիզիկական գերլարվածությունը, որի հետևանքով տեղի է ունենում հոդախախտ, մկանների, ջիլերի կամ անոթների մասնակի կամ ամբողջական պատռվածք:



3. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԾԱԾԿՈՒՑԹՆԵՐ (ՌԻՍԿԵՐ)

«ՌԵԳՈ ԸՆՏԱՆԻՔ» պրոդուկտը ներառում է ապահովագրության պայմանագրի գործողության ընթացքում տեղի ունեցած դժբախտ պատահարի հետևանքով առաջացած հետևյալ ֆիքսված ռիսկերի փաթեթը՝

- Մարմնական վնասվածք/խեղում

Հատուցումն իրականացվում է համաձայն Պայմանների՝ Աղյուսակ 2-ի (կախված վնասի բնույթից՝ տոկոսային):

- I, II, III կարգի հաշմանդամություն

Հատուցումն իրականացվում է միանվագ՝ կախված ապահովագրական պատահարի հետևանքով 365 (երեք հարյուր վաթսուն հինգ) օրվա ընթացքում Ապահովագրված անձի բժշկա-սոցիալական փորձաքննության արդյունքում նշանակված հաշմանդամության կարգից.

- Հաշմանդամության I կարգ - ապահովագրական գումարի 75%-ի չափով,
- Հաշմանդամության II կարգ - ապահովագրական գումարի 60%-ի չափով,
- Հաշմանդամության III կարգ - ապահովագրական գումարի 40%-ի չափով:

- Մահ

Հատուցումն իրականացվում է միանվագ՝ ապահովագրական գումարի 100%-ի չափով, եթե Ապահովագրված անձի մահը վրա է հասել ոչ ուշ, քան մահացու ելքի հանգեցրած ապահովագրական պատահարի օրվանից 120 (հարյուր քսան) օրվա ընթացքում: Ապահովագրված անձի մահվան դեպքում Շահառու են համարվում Ապահովագրված անձի ժառանգները՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:



4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ, ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

Տարբերակ	Ապահովագրավճար	Ապահովագրական գումար
Տարբերակ 1	5000 ՀՀ դրամ	500 000 ՀՀ դրամ
Տարբերակ 2	8500 ՀՀ դրամ	1 000 000 ՀՀ դրամ
Տարբերակ 3	12000 ՀՀ դրամ	2 000 000 ՀՀ դրամ

5. ԶՀԱՏՈՒՑՎՈՂ ԳՈՒՄԱՐ (ՖՐԱՆՇԻԶԱ)

- Չի կիրառվում

6. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ

- Ապահովագրությունը գործում է ՀՀ տարածքում

7. ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

- Ապահովագրության պայմանագիրը կնքվում 1 տարի ժամկետով
- Ապահովագրության պայմանագիրը ուժի մեջ է մտնում կնքմանը հաջորդող ամսաթվի՝ ժամը 00.00-ին:

8. ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ
- Կոնտակտային տվյալներ



9. ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Ողջ ընտանիքին ապահովագրելու հնարավորություն՝ առանց ապահովագրվող անձանց ցանկը ներկայացնելու
- Ապահովագրական պատահարների/ռիսկերի առավելագույն ծածկույթ՝ ցածր գնով
- 1-70 տարեկան անձանց ապահովագրելու հնարավորություն
- Պաշտպանություն օրական 14 դրամով

